ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Հասմիկ ՂԱԶԱՐՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: hasmik. ghazaryan@mail.ru

ՋՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ, ԹՎԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Ժամանակակից հայերենը, լինելով համակարգված և նորմավորված լեզու, չի բացառում զուգաձևությունների գոյությունը: Ներկա փուլում նրա բոլոր մակարդակներում՝ հնչյունական, բառային, քերականական, զուգաձևությունները հասել են մեծ չափերի:

Սույն հոդվածում քննվում են ժամանակակից արևելահայ գրական լեզվի ածականական, թվականական և դերանվանական համակարգերում առկա կանոնական և ոչ կանոնական զուգաձևությունները, նրանց իմաստային, ոճական ու կիրառական առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *նորմ, զուգաձևություն, համեմատության, բաղդատական, գերադրական աստիճաններ, քանակական թվական, դասական թվական, բաշխական թվական, կոտորակային թվական, դերանուն, հոլովում, հոլով, հոգնակի թիվ :*

А. Газарян

ПАРАЛЛЕЛЬНЫЕ ФОРМЫ В ПРИЛАГАТЕЛЬНЫХ, ЧИСЛИТЕЛЬНЫХ И МЕСТОИМЕННЫХ СИСТЕМАХ

Современный армянский язык, являясь систематизированным и нормированным языком, не исключает существование параллельных форм. На данном этапе во всех его уровнях: фонетическом, лексическом, грамматическом, параллельные формы достигли больших размеров.

В данной статье исследуются имеющиеся в прилагательных, числительных и местоименных системах современного восточно-армянского литературного языка нормативные и ненормативные параллельные формы, их смысловые, стилистические и

прагматические особенности.

Ключевые слова: *норма, параллельные формы, степени сравнения, сравнительная степень, превосходная степень, количественное числительное, порядковое числительное, распределительное числительное, дробное числительное, местоимение, склонение, падеж, множественное число.*

A.Ghazaryan

PARALLEL FORMS IN ADJECTIVE, NUMERAL AND PRONOUN SYSTEMS

The Modern Armenian language, being a systematized and normalized language, does not exclude the existence of parallel forms. At this stage, in all its levels: phonetic, lexical, grammatical, parallel forms have reached large sizes.

This article examines the normative and non-normative parallel forms, their semantic, stylistic and practical features available in the adjective, numeral and pronoun systems of the modern Eastern Armenian literary language.

Keywords: *norm, parallel forms, degrees of comparison, comparative degree, superlative degree, cardinal numeral, ordinal numeral, distributive numeral, fractional numeral, pronoun, declension, case, plural.*

Զուգաձևությունները իմաստով նույն և ձևով տարբեր բառային կամ քերականական ձևեր են, որոնք հատուկ են նորմավորված գրական լեզուներին իրենց գոյության բոլոր շրջաններում: Դրանք պատմականորեն <<առաջանում են որպես լեզվական հեղաշրջման հետևանք, լեզվի մյուս գործոնների ազդեցության արդյունք, որպես լեզվական իրողությունների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք>>:[1]

Լեզվական համակարգում առաջացող զուգահեռ ձևերը սկզբից համարվում են ոչ հանձնարարելի: Ժամանակի ընթացքում, եթե զուգաձևությունները արմատավորվում են և տարածվում, ձեռք են բերում հավասար գործածության իրավունք արդեն գոյություն ունեցողի կողքին: Զուգահեռ տարբերակները կարող են լինել համազոր և ոչ համազոր: Համազոր են այն զուգաձևությունները, որոնք, չունենալով լեզվաարտահայտչական կամ իմաստային որևէ տարբերություն, կիրառվում են բոլոր ոլորտներում և ազատ փոխարինում իրար: Ժամանակի ընթացքում համազոր զուգաձևությունների հավասարակշռությունը խախտվում է, և հաճախանում է նոր տարբերակի գործածությունը: Աստիճանաբար հինը իր տեղը զիջում է նորին (հնարավոր է և հակառակը): Ոչ համազոր են այն զուգաձևությունները, որոնք, ունենալով իմաստային, ոճական, կիրառական, տարածական

[1] ***Աղաջանյան Զ.****, Հնաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, էջ 114:*

որոշակի տարբերություններ, գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ:

Զուգաձևությունների ժամանակավոր հարաբերակցության շրջանում տարբերակների հարաբերակցությունը չի կարող նույնը լինել, ուստի և այդ հարաբերակցությամբ պայմանավորված՝ զուգաձևությունները լինում են կանոնական և ոչ կանոնական:

Սովորաբար ոչ կանոնական զուգաձևությունները հակասում են լեզվական նորմին, սակայն լեզուն չի բացառում այնպիսի անկանոն տարբերակների գոյությունը, որոնց գործածությունը որոշակի նպատակով և որոշակի բառային միջավայրում լեզվական նորմի տեսակետից համարվում է թույլատրելի, և քանի որ ժամանակակից հայերենի լեզվական համակարգի բոլոր մակարդակներում մեծ չափերի են հասել կանոնական ու ոչ կանոնական զուգաձևությունները, որոնք էլ կարող են լինել նորմատիվ և ոչ նորմատիվ, ուստի անճշտություններից խուսափելու համար անհրաժեշտ է ունենալ ստույգ գիտելիքներ գրական լեզվի նորմի մեջ ընդունված զուգաձևությունների, նրանց առաջացման, գոյության, ինչպես նաև գործածության ոլորտների, տեղին և ճիշտ օգտագործման նրբությունների մասին: Արդի հայ լեզվաբանության մեջ այս առումով առավել շատ կատարվել են նկարագրական աշխատանքներ: Արձանագրվել են եղած փաստերը և դրանով իսկ հաստատվել նրանց գոյությունը լեզվի համակարգում, բայց թե ինչ արժեք ունեն դրանք լեզվի զարգացման տվյալ փուլում, տարածական ինչ չափերի են հասել, կիրառական ինչպիսի ոլորտներ են ընդգրկում, իմաստային, ոճական ինչպիսի նրբություններ ունեն, կանոնակա՞ն են, թե՞ ոչ, և նման այլ հարցեր մնում են քիչ ուսումնասիրված:

Սույն հոդվածի սահմաններում մեզ հետաքրքրում են ժամանակակից գրական հայերենի ածականական, թվականական, դերանվանական համակարգերում առկա և նորմատիվ քերականություններում ընդունված զուգաձևությունները, որոնց քննությանն էլ կանդրադառնանք ստորև՝ ներկայացնելով դրանք ըստ իրենց ունեցած կիրառական, իմաստային, կառուցվածքային և ոճական առանձնահատկությունների:[1]

Ածականական զուգաձևություններ: Ձևաբանական մակարդակում ածականական զուգաձևություններն առաջանում են որակական ածականների համեմատության աստիճաններից բաղդատականը և գերադրականը կազմելիս: Բաղդատական աստիճանը, որ ցույց է տալիս առարկայի հատկանիշի ավելի, պակաս կամ հավասար լինելը, ունի երեք տարատեսակ՝ **առավելական, նվազական, հավասարական**: Սրանք կազմվում են՝ դրական աստիճանին ավելացնելով **ավելի** կամ **առավել**,

[1] *Բոլոր զուգաձևությունները ներկայացվում են <<Հայոց լեզու>>առարկայի ձևաբանության բաժնի դպրոցական ծրագրերի, գործող դասագրքերի, բուհական ձեռնարկների համաձայն:*

պակաս կամ **նվազ** և **նույնքան** օժանդակ բառերը, օրինակ՝ **ավելի հմայիչ – առավել հմայիչ, նվազ հմայիչ-պակաս հմայիչ, նույնքան հմայիչ:** Բաղդատական աստիճանի առավելական և նվազական տարատեսակների զուգահեռ տարբերակները համազոր են, չունեն ո՛չ իմաստային, ո՛չ ոճական, ո՛չ էլ կիրառական տարբերություն:

Գերադրական աստիճանը, որ արտահայտում է առարկայի համեմատվող հատկանիշի գերազանցություն այլ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ, կամ՝ առանց անմիջական համեմատության և ըստ այդմ լինում հարաբերական և բացարձակ, կազմվում է **ամենից, բոլորից** օժանդակ բառերով, **ամենա-** նախածանցով և **-գույն** վերջածանցով: Օրինակ՝ **ամենից գեղեցիկ, բոլորից գեղեցիկ, ամենագեղեցիկ, գեղեցկագույն:**

Ամենից, բոլորից բառերով և **ամենա-** նախածանցով գերադրական աստիճան կարելի է կազմել համեմատելի հատկություն նշանակող բոլոր որակական ածականներից, իսկ **-գույն** վերջածանցով՝ ոչ բոլորից: **Ամենից, բոլորից** բառերով և **ամենա-** նախածանցով կազմված տարբերակները համազոր են և կարող են ազատ փոխարինել իրար: Սրանցով կազմված գերադրականի ձևերը համարժեք չեն **–գույն** ածանցով կազմություններին, որոնք ունեն գործածության սահմանափակություն, առավելապես գործածվում են բարձր ոճում և հիմնականում արտահայտում բացարձակ գերադրականի իմաստ, այսինքն՝ հատկանիշի գերազանցություն՝ առանց անմիջական համեմատության:

Բացի ձևաբանական միջոցներից՝ ածականի համեմատության աստիճանների իմաստը կարող է արտահայտվել նաև բառային կամ շարահյուսական այլ միջոցներով, ինչպես, օրինակ, **գեղեցիկ, քան վարդը// վարդից գեղեցիկ, արևի չափ գեղեցիկ//արևի պես գեղեցիկ, քիչ գեղեցիկ//մի փոքր գեղեցիկ//փոքր-ինչ գեղեցիկ, գեղեցիկներից գեղեցիկ// չափազանց գեղեցիկ//գեղեցի՞կ-գեղեցի՞կ//գերգեղեցիկ //վերին աստիճանի գեղեցիկ** և այլն: Ձևաբանական օրինաչափ կազմությունները վերոնշյալ կաղապարների հետ համեմատության աստիճանների քերականական կարգի արտահայտման զուգահեռ տարբերակներ չեն: Սրանք ուղղակի առարկայի ավելի կամ առավելագույն հատկանիշը ցույց տվող միջոցներ են, իսկ նրանցով կազմված ձևերը կարող են միայն իմաստային դաշտում դիտվել զուգաձևություն՝ արտահայտված տարբեր մակարդակների միավորներով:

Թվականական զուգաձևություններ: Ժամանակակից հայերենում թվականներն ըստ իմաստի լինում են՝ **ա)քանակական, բ)կոտորակային, գ)դասական, դ)բաշխական:**

Քանակական թվականները, որ կոչվում են նաև բացարձակ և կազմում թվականների հիմնական խումբը, ցույց են տալիս առարկաների որոշակի, կոնկրետ թիվ, քանակ: Արտահայտվում են արաբական թվանշաններով, բառերով, տառերով և խառը՝ թվերով ու բառերով՝ **1//մեկ//Ա, 500//հինգ**

հարյուր//Շ//5 հարյուր: Սրանք գրության համազոր ձևեր են, կարող են ազատ իրար փոխարինել: Բազմաբաղադրիչ հարադրական թվականների դեպքում հարմար է թվերով կամ խառը գրությունը:

Քանակական թվականներից զուգահեռ ձևերով հանդես են գալիս **մի//մեկ, երկու//երկուս, ինն//ինը, տասը//տասն//տաս** թվականները : **Մի//մեկ** թվականական զուգաձևության առաջին եզրը գրաբարում գոյականների հետ կարող էր գործածվել ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս: Հետադաս գործածության դեպքում այն ավելի շատ արտահայտում էր անորոշության իմաստ, կատարում անորոշ դերանվան դեր:[1] Ժամանակի ընթացքում **մի**-ի թվականական իմաստը, անկախ շարադասությունից, սկսեց նվազել դերանվանական իմաստի համեմատ, որն էլ պատճառ դարձավ, որ լեզվում **մի** թվականի կողքին զուգաձևությամբ ստեղծվի նոր թվական՝ **մեկ (մի-ակ, իա>է,ե): Մի//մեկ** համազոր տարբերակային ձևերը այսօր էլ ժամանակակից հայերենում համարվում են նորմատիվային կանոնավոր ձևեր և ունեն միայն կիրառական տարբերություն՝ պայմանավորված երկրորդ եզրի գործածության հաճախականությամբ :

Երկու թվականը գոյականաբար հոլովվում է **երկուս-** հիմքով՝ **երկուսը, երկուսի, երկուսից, երկուսով, երկուսում** : Ուղիղ ձևը, սակայն, առանց հոդի գործածվելիս կարող է լինել թե՛ ս-ով, թե՛ առանց ս-ի՝ **երկու** կամ **երկուս**: Օրինակ՝ Տետրում հինգ **երկու//երկուս** կա:

Ինը//ինն և **տասը//տասն//տաս** թվականական զուգաձևության եզրերը տարբերվում են միայն **ը** կամ **ն** վերջնահնչյունով, որը փոխանվանական կիրառության դեպքում կատարում է նաև որոշիչ հոդի դեր: **Ինը** թվականը միշտ պահպանում է իր **ը** կամ **ն** վերջնահնչյունը (տասնինը, իննսուն, իննյակ, իննանիշ, իննանոց, ինըհարկանի, ինըհատորյակ, ինըտոննանոց, իննամյա, իններորդ, իննական, իննից, իննով, իններ): **Տասը** թվականը երբեմն կարող է լինել նաև **տաս** ձևով **(Երկուսից տաս է պակաս):** Հոլովվելիս **տասը** թվականը կորցնում է **ը** վերջնահնչյունը **(տասի, տասից, տասով):** Բառակազմության ժամանակ **տասը** բառի հիմքը մերթ պահպանում է **ն**-ն (**տասներկու, տասնորդ, տասնապատիկ, տասնյակ, տասնամյակ**), մերթ կորցնում (տասհարկանի, տասհատորյակ, տասգլխանի, տասդրամանոց, տաստոննանոց):

Կազմության և գրության զուգաձևությամբ արտահայտվում են նաև բաշխական թվականները, որոնք ցույց են տալիս առարկաների բաշխումը թվային հավասար քանակով և կազմվում՝ ա)քանակական թվականներին ավելացնելով **–ական** ածանցը **(մեկական, երկուական, ութական, հարյուրական)**, բ)քանակական թվականների կրկնությամբ **(մեկ-մեկ, երկու-երկու, ութ-ութ,հարյուր-հարյուր)**:

---

[1] *Տե՛ս Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ72:*

Միևնույն թվականի կազմության զուգահեռ տարբերակներն ունեն կիրառական տարբերություն. կրկնությամբ կազմությունը հատուկ է փոքր թվերին և սակավաթիվ կլոր թվերին՝ **երեք-երեք, հազար-հազար**, իսկ **–ական** վերջածանցով կազմությունը՝ մեծ թվերին՝ **երկու միլիոն հինգհարյուրական**: **Մեկ-մեկ//մի-մի//մեկական** տարբերակներից առաջինը այժմ քիչ է գործածվում բաշխականի իմաստով, երկրորդ և երրորդ տարբերակները, լինելով համազոր և կանոնական, ունեն գործածության մեծ հաճախականություն: Բաշխական թվականներն ունեն նաև գրության զուգաձևություն, որն արտահայտվում է **1.բառակրկնությամբ (երկու-երկու), 2.արաբական թվանշանի կրկնությամբ(2-2), 3.-ական ածանցով(երկուական), 4.արաբական թվանշանով և -ական ածանցով (2-ական):** Սրանք գրության համազոր ձևեր են և կարող են ազատ իրար փոխարինել:

Ամբողջի մասերի հարաբերությունը ցույց տվող կոտորակային թվականները հարադրական կազմություններ են՝ բաղկացած երկու մասից՝ քանակական և դասական թվականներից՝ **երկու երրորդ, հինգ վեցերորդ** և այլն: Հաճախ կոտորակային թվականի հայտարարի վրա ավելանում է **–ական** ածանցը, ինչպես՝ **երկու երրորդական, հինգ վեցերորդական** և այլն: Եթե կոտորակային թվականի համարիչը **մեկ** թվականն է, այն կարող է զեղչվել, օրինակ՝ **մեկ հինգերորդ մաս** կամ **հինգերորդ մաս: Մեկ երկրորդ և մեկ չորրորդ** կամ **մեկ քառորդ** կոտորակային թվականները ունեն տարբերակային այլ ձևեր՝ **կես** և **քառորդ:** Այսպիսով՝ զուգահեռ տարբերակներ են՝ **երկու երրորդ//երկու երրորդական, մեկ երկրորդ // մեկերկրորդական //երկրորդ // կես, մեկ չորրորդ // մեկ չորրորդական //չորրորդական // քառորդ:** Կոտորակային թվականներն ունեն նաև գրության զուգաձևություն: Կարող են դրսևորվել՝ բառերով՝ **մեկ երկրորդ, երեք հինգերորդ,** թվանշաններով՝ **1/2, 3/5**, խառը և տասնորդական կոտորակներով՝ **0,5 /զրո ամբողջ հինգ տասնորդական, 3,5/երեք ամբողջ հինգ տասնորդական:** Կոտորակային թվականների կազմության և գրության զուգաձևությունները համազոր են և կանոնական:

Առարկայի թվային կարգ ցույց տվող դասական թվականներն ունեն միայն գրության զուգաձևություն: Դրանք, իրենց թվային արժեքին համապատասխան, արտահայտվում են բառերով՝ **երկրորդ**, արաբական թվանշաններով, որոնցից հետո դրվում է գծիկ և -րդ մասնիկը **(2-րդ),** հռոմեական թվանշաններով **(II)**, հայկական այբուբենի տառերով՝ **Բ**: Սրանք համազոր, կանոնավոր տարբերակներ են և ունեն իրենց կիրառության ոլորտը: Կիրառական ոլորտի սահմանափակում ունեն հռոմեական թվանշաններով արտահայտված դասականները. սովորաբար գործածվում են մինչև **30**-ը, նրանից բարձրի դեպքում ստանում են բառային դրսևորում՝ **քառասուներորդ**, կամ փոխարինվում են արաբական թվանշաններով, որոնցից հետո դրվում է գծիկ և -րդ մասնիկը՝ **40-րդ**:

Դասական թվականների իմաստով արաբական թվանշանների գործածությունը առանց նրանցից հետո գրվող **–ին (1-ին)** կամ **–րդ (2-րդ)** մասնիկների՝ թույլատրելի է համարվում միայն հետադաս կիրառության դեպքում: Այսպես՝ 3-րդ հոդված//**հոդված 3** (կարդացվում է՝ **հոդված երրորդ), 78-րդ հոդված// հոդված 78 (=հոդված յոթանասուներորդ), 1-ին կետ// կետ 1 (=կետ առաջին), 5-րդ մաս //մաս 5(=մաս հինգերորդ)** և այլն[1]: Երկրորդ տարբերակները հիմնականում գործածվում են վերնագրերում, ենթավերնագրերում, հղումներում և այլն: Թվարկումների ժամանակ դասական թվականները կարող են արտահայտվել եռաձևությամբ՝ **1-ին, 2-րդ//1.,2.// 1), 2):**

Թվականների մեջ կան նաև արմատատարբերակներ՝ **եր//եռ , չոր//քառ, հի//հինգ, վեց//վաթ, յոթ//յոթան:**

Դերանվանական զուգաձևություններ: Դերանվանական համակարգում կանոնական, համազոր հոլովական տարահիմք զուգաձևություններ են անձնական դերանվան առաջին և երկրորդ դեմքի դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները, օր.՝ **ինձնից-ինձանից, ինձնով-ինձանով, ինձնում- ինձանում, քեզնից-քեզանից, քեզնով-քեզանով, քեզնում- քեզանում, մեզնից-մեզանից, մեզնով- մեզանով, մեզնում-մեզանում, ձեզնից-ձեզանից, ձեզնով-ձեզանով, ձեզնում-ձեզանում:** Չունենալով իմաստային և ոճական տարբերություն՝ սրանք ունեն միայն գործածության տարբերություն, և քանի որ լեզուն նախապատվությունը տալիս է կարճ ձևերին, ուստի երկրորդ տարբերակները գործածությամբ զիջում են առաջիններին:

Իր և յուր զուգաձևության մեջ վերջինը հնացած է և միայն ոճական կիրառություն ունի :

Չեզոքանական-ոճական զուգաձևություններ կարելի է համարել **ես//ինքս, դու//ինքդ, նա//ինքը, մենք//ինքներս, դուք//ինքներդ, նրանք//իրենք** ձևերը, որոնք ունեն նրբիմաստային տարբերություններ. երկրորդների մեջ դեմքի քերականական իմաստը առավել ևս շեշտվում է և այդ պատճառով էլ հաճախ կիրառվում է նրա հետ միասին՝ **ես ինքս, դու ինքդ, նա ինքը**(առանց որևէ կետադրության): Սրանք համազոր կանոնական զուգաձևություններ են: Միայն **նա//ինքը զուգաձևության** եզրերը, լինելով համազոր տարբերակներ, ոչ բոլոր դեպքերում կարող են փոխարինել իրար: Օր.՝ **Ինքը նրա մասին ոչինչ չգիտեր :** Նշենք նաև, որ վերոբերյալ զուգաձևությունները վերաբերվում են եռաձևությունների, եթե ավելացնում ենք **ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք իրենք ձևերը**, որոնք ոճական հատուկ դեր են կատարում՝ էլ ավելի

---

[1] *Հետադաս դիրքում անթույլատրելի է համարվում դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը, այսինքն՝գրել ոչ թե **կետ 1-ի, գլուխ II-ով, բաժին 4-րդի, նկար 5-ը, սյունակ VI-ը և այլն, այլ 1-ին կետի, II գլխով , գ մասից, 4-րդ բաժնի, 5-րդ նկարը, VI սյունակը** և այլն:*

շեշտելով դեմքի գաղափարը: Այսպես՝ **ես//ինքս//ես ինքս, դու//ինքդ//դու ինքդ, նա//ինքը//նա ինքը** և այլն:

Ձևաբանական-հնչերանգային տարբերակներ կարելի է համարել հարցական դերանունների շեշտված կամ բացականչական հնչերանգով արտահայտված ձևերը, որոնք կանոնական, համազոր տարբերակներ են, ունեն միայն արտասանական-հնչերանգային տարբերություններ: Օր.՝ **ի՞նչ, ի՞նչ, ի՛նչ:**

Փոխադարձ դերանուններից տարբերակային ձևով հանդես են գալիս **մեկմեկու-մեկմեկի** ձևերը: Սրանք կանոնական են. գերադասելի է, սակայն, առաջին եզրը:

Մի շարք դերանուններ փոխանվանաբար գործածվելիս հոգնակի ուղղականում ունենում են զուգաձևություններ՝ **-ներ** և **-ք** մասնիկներով, օրինակ՝ **այսպիսիները//այսպիսիք, այդպիսիները//այդպիսիք, այնպիսիները//այնպիսիք, նույնպիսիները//նույնպիսիք, ինչպիսիները//ինչպիսիք, որպիսիները//որպիսիք:** Սրանք համազոր զուգաձևություններ են, բայց **ք**-ով ձևերը սահմանափակ կիրառություն ունեն և չեն հոլովվում:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենի ածականական, թվականական և դերանվանական համակարգերում արտահայտված կանոնական և ոչ կանոնական, համազոր և ոչ համազոր զուգաձևությունների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք հիմնականում ունեն նրբիմաստային, կիրառական, տարածական, ոճական տարբերություններ և համապատասխան խոսքում զուգաձևության եզրերից մեկնումեկի ընտրության հարցում նշված տարբերությունները պետք է անպայման հաշվի առնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, հ.2, Ե., 1974:
2.Աղաջանյան Զ., Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007:
3.ԱսատրյանՄ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2007:
4.Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Ձևաբանություն, Ե., 2008:
5.Ավետիսյան և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
6.Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրակա խորհրդի նախագահ, բ.գ.թ., Ա.Յու. Սարգսյանը: